

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N Ա

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասին և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Թույլատրել «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ ստեղծելու «Երևանի պետական համալսարանի երկրաբանական հետազոտությունների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով սահմանված մասնակցի լիազորությունները վերապահելով «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Սահմանել, որ «Երևանի պետական համալսարանի երկրաբանական հետազոտությունների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի և պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

ՀՀ կրթության և գիտության նախարար Սպարտակ Սեյրանյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության **2008** թվականի գործունեության ծրագրի **13-** րդ կետով նախատեսված՝ «Կառավարությունը հետամուտ է լինելու բարձրագույն ուսումնական հաստատությունները գիտական լուրջ կենտրոններ դարձնելուն՝ խթանելով հետազոտական աշխատանքների ուժեղացումը» միջոցառման կատարման ապահովելու, ինչպես նաև, մեր երկրի տնտեսության զարգացմանն ուղղված երկրաբանա-հետախուզական աշխատանքների իրականացման, հանրապետության հանքային շրջանների և հանքավայրերի երկրաբանական հանույթային աշխատանքների կատարման, այս բնագավառում գիտական և գիտահետազոտական արտադրության կազմակերպման ոլորտն աշխուժացնելու նպատակով՝ անհրաժեշտություն է առաջացել Երևանի պետական համալսարանում ստեղծելու տնտեսական ընկերություն, որի խնդիրը երկրաբանական հետազոտությունների ոլորտում առևտրային գործունեության իրականացումն է:

Առաջարկվում է նշված կառույցն ստեղծել որպես «Երևանի պետական համալսարանի երկրաբանական հետազոտությունների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն: Այս կազմակերպա-իրավական ձևը նպատակահարմար է՝ Կենտրոնի կանոնադրական կապիտալը հարյուր տոկոս բաժնեմասով «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը պատկանելու առումով:

Մայր բուհում նման կառույցի առկայությունը լայն հնարավորություն կընձեռի հանրապետությունում պատշաճ մակարդակով իրականացնելու՝

- հանքային շրջանների և հանքավայրերի երկրաբանական հանույթային, օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզման, ջրաերկրաբանական հետազոտական, միկրոսեյսմաշրջանացման աշխատանքներ,

- ճարտարագիտական կառույցների ջրաերկրաբանական ճարտարագիտա-երկրաբանական պայմանների, ապարների և գետնահողերի գեոտեխնիկական հատկությունների ուսումնասիրություններ,
- տեղական և համաշխարհային շուկաներում գիտության այս բնագավառում գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքների իրացում,
- գիտահետազոտական մշակումների վրա հիմնված առևտրային այլ ծրագրեր:

Արդյունքում՝ Կենտրոնի աշխատանքների արդյունավետ կազմակերպման գրավականը, անշուշտ, լինելու է Երևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, լավագույն ասպիրանտների և ուսանողների գիտական ներուժի օգտագործումն ու կատարելագործումը:

Ս.ՍԵՅՐԱՆՅԱՆ